յալ գյուղերից և բնակավայրերից գանձվում էին հօգուտ դիվանի (մութավաջջիհաթ-ե դիվանի)»[12]։

Պետք է ասել, որ XVII դարում դիվանի հողերից գանձվող բոլոր հարկերի պարգևումը պետական պաշտոնեությանն ու զինվորականությանը որպես թիուլ իրականում ժամանակավոր, ոչ ժառանգական հողատիրության գլխավոր ձևն էր, չնայած մեզ հասած վավերագրերում և այլ սկզբնաղբյուրներում մենք դրա իրավական ձևակերպումը չենք տեսնում։ Ըստ ֆերմանների թիուլդարներին շնորհվում էր միայն տվյալ օբյեկտի հարկերը գանձելու իրավունքը, ուրիշ իրավունքներ հողի, ջրի և բնակչության նկատմամբ նրանց չէր վերապահվում։ Բայց երբ գյուղն իր ամբողջ հարկային պարտավորություններով պատասխանատու էր դառնում միայն այս կամ այն թիուլդարին և այդ վիճակը շարունակվում էր մի քանի տասնյակ տարիներ, իսկ երբեմն էլ թիուլդարի մահվանից հետո փոխանցվում նրա ժառանգներից որևէ մեկին, այդ դեպքում ահա թիուլդարի և նրա հարկատու ռայաթների միջև ստեղծվում էին հողատիրոջ և հողը վարձակալող գյուղացու փոխհարաբերություններ։ Շատ հաճախ այդ փոխհարաբերությունները ավելի ամուր էին, քան մուլքադարի և նրա ռայաթների փոխհարաբերությունները, քանի որ այստեղ ևս գոյություն ուներ անմիջական կախվածություն, որն արտահայտվում էր գյուղական համայնքի կոլեկտիվ պատասխանատվության ձևով։

Համեսալեն նույնպես, եթե այն տրված էր դիվանի գյուղերի բոլոր հարկերը գանձելու իրավունքով, կարող էր համարվել ժամանակավոր, ոչ ժառանգական հողատիրություն։ Նման թիուլներն ու համեսալեները ընդհատվում էին տվյալ թիուլդարի կամ համեսալեդարի մահվան, ծառայությունից հրաժարվելու կամ այլ պատճառներով։ Այդ դեպքում արդեն գյուղերից ստացվող եկամուտները անմիջապես անցնում էին դիվանի տրամադրության տակ։ Բայց դա հազվադեպ էր տեղի ունենում, երբեմն միայն պատահում էր, որ որևէ գյուղից ստացվող ռենտա-հարկը թիուլի ընդհատվելու պատճառով մեկ կամ ավելի տարիներ մնում էր չգանձված։ Սակայն դրանք ի վերջո հաշվվում էին և ռոճիկի դիմաց միանվագ տրվում որևէ պաշտոնյայի, կամ իրացվում այլ տնտեսական գործարքներով ու հանձնարարություններով (հավալե)։ Ինչպես դիվանի, այնպես նաև ոչ դիվանի հողերից գանձվող ռենտա-հարկը եկամտի այն գլխավոր աղբյուրն էր, որով պայմանավորված էր պետության ֆինանսական հենարանի, դիվանական գանձարանի հարստությունը։

Հետևհետ ընդարձակվող դիվանի հողերի անմիջական ղեկավարությունը պահանջում էր հսկայական կազմակերպչական աշխատանք, որ վեր էր սեֆյան պետության ուժերից։ Այդ իսկ պատճառով իրեն վերապահելով դիվանի հողերի սեփականության իրավունքը, պետությունը դրանց մի մասը, ինչպես ասվեց, ռոճիկի դիմաց, որպես թիուլ և համեսալե՝ տալիս էր պետական պաշտոնյաներին, իսկ մնացած մասը՝ մասնավոր մարդկանց՝ կապալով։ Հիշյալ կապալառուները, որոնք կոչվում էին «մուսթաաջիրներ» կամ «ղարիբներ», միանվագ որոշ գումար էին մուծում դիվանական դրամարկղը և որոշ ժամանակ մեկ կամ մի քանի հարկային օբյեկտների բոլոր հարկերը կամ

[12] **И. П. Петрушевский,** Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—начале XIX вв., Ленинград, 1949, стр. 188.